ՈՒՐԱԽԱՌԻՐ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գոհունակութեամբ տեղեկացանք թէ Ս. Աթոռիս ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի նախկին երկու սաներ որոշած ըլլալով եկեղեցական ասպարէզ մտնել, կուսակրօն քահանայ ձեռնադրուած են Պոլսոյ մէջ, ձեռամբ Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Շնորհիք Արքեպս. Գալուստեանի:

Ա. ԲԱՐԵՇՆՈՐՀ ՑԱՐՈՒԹԻՒՆ ՍՐԿ. ԱԹԷՇԵԱՆ

Ծնած է նախկին հայաշատ Տիգրանակերտի մէջ 1954ին, բարեպաշտ ծնողներու զաւակ: Աւարտելէ ետք տեղւոյն պետական նախակրթարանը, 1966-ին փոխադրուած է Պոլիս և հետևած Ս. Խաչ Դպրեվանքի դասընթացքներուն:

Յաջորդ տարի, 1967ին, դիմած է և ընդունուած Երուսաղէմի ժառանգաւորաց Վարժարան և Ընծայարան, ուր, նախապատրաստական դասարանը մէկ տարի մնալէ ետք յաջողութեամբ հետևած է և աւարտած ժառանգաւորաց բաժնի հնգամեայ և Ընծայարանի եռամեայ դասընթացքները: Ուրբաթ կրելու արտօնութիւն ստացած է 1970 Դեկտեմբերին, իսկ Սարկաւագ ձեռնադրուած 1974 Սեպտեմբերին:

Իր զինուորական ծառայութիւնը կատարելու համար, Բարեշ. Յարութիւն Սարկաւագ ակամայ մեկնած է Երուսաղէմէն Յունիս 1976ին: Կուսակրօն քահանայ ձեռնադրուած է 22 Օգոստոս 1976ին Պոլսոյ մէջ, Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ն. Ամեն. Տ. Շնորհիք Ս. Արքեպս. Գալուստեանի կողմէ, և վերակոչուած Տ. ԱՐԱՄ ԱՐԵՂԱՑ:

Բ. ԲԱՐԵՇՆՈՐՀ ՀԱՅԿ ՍՐԿ. ԵՐԿԱԹԵԱՆ

Ծնած է Պոլիս 1954ին, և նախակրթութիւնը ստացած ծննդավայրին Ս. Մեսրոպեան վարժարանին մէջ, որուն հինգերորդ դասարանը աւարտելէ ետք 1968ին դիմած է և ընդունուած Երուսաղէմի ժառանգաւորաց Վարժարան և Ընծայարան:

Ան հետևած է ժառանգաւորաց Վարժարանի դասընթացքներուն, և հնգամեայ շրջանը աւարտած է 1973ի Յունիսին: Ուրբաթ կրելու արտօնութիւն ստացած է 1972 Դեկտեմբերին:

Ժառանգաւորաց Վարժարանը աւարտելէ ետք, ընտանեկան պատճառներու բերումով վերադարձած է Պոլիս: Մանկութենէն մեծցած եկեղեցիի մթնոլորտին մէջ և էապէս հաստատցեալ, ան փափաք յայտնած է նուիրուելու Հայց. եկեղեցիի ծառայութեան: Ըստ այնմ, սարկաւագ ձեռնադրուած է Պոլսոյ մէջ 19 Օգոստ. 1976ին, իսկ կուսակրօն աբեղայ՝ 22 Օգոստոսին, ձեռամբ Ամեն. Տ. Շնորհիք Պատրիարքի, և վերակոչուած Տ. ՄԱՆՈՒԷԼ ԱԲԵՂԱՑ:

«Սիոն», Երուսաղէմի ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի նախկին երկու ուսանողներուն այս աստուածահաճոյ քայլին առիթով իր գոհունակութիւնը կը յայտնէ, և շնորհաւորելով Տ. Արամ և Տ. Մանուէլ Աբեղաները, անոնց կը մաղթէ բեղմնաւոր և եկեղեցանուէր ծառայութեան երկար ու յաջող տարիներ:

digitised by A.R.A.R.@